



եկեղեցիին բանալին: Ան գայրացած ամփոխի մը կողմէ սպաննուեցաւ: Իր յաջորդը Պրիկհիամ Եանկ, Մորմոն եկեղեցին Եութա նահանգը փոխադրեց:

Ահաւասիկ կը ներկայացնենք Մորմոնականութեան գլխաւոր ուսուցումներէն ցանկ մը.—

Աստուած փառաւորուած մարդ է:

«Աստուած մեզի նման մարդ էր, հիմա փառաւորուած է ...կ'ըսեմ, եթէ այս օր զինք տեսնելու ըլլայիր, մարդու կերպարանքով պիտի տեսնէիր, ճիշդ քեզի նման, ժամանակին մեզի նման մարդ էր, այո Աստուած ինք, մեր բոլորին Հայրը ապրեցաւ երկրի վրայ» (Ճոզէֆ Սմիթ, *Եկեղեցիին Պատմութիւնը*, հատոր 6 էջ 305):

Ճոզէֆ Սմիթ երկինքի դարպասապահը պիտի ըլլայ:

«Ոչ մարդ կամ կին այս տնտեսութեան ընթացքին պիտի կարենայ մտնել Աստուծոյ թագաւորութեան մէջ առանց Ճոզէֆ Սմիթի համաձայնութեան: Այն օրէն երբ քահանայութիւնը երկրէ առնուեցաւ, ամէն անհատ պէտք ունի Ճոզէֆ Սմիթի վկայագիրին, որպէս արտօնութիւն մտնելու պալատը ուր Աստուած եւ Քրիստոս կը բնակին» (Պրիկհիամ Եանկ *Յայտնութիւններու Պարբերաթերթ* հատոր 6 էջ 289):

Մեռեալները կրնան փրկուիլ:

«Մենք միակ ժողովուրդն ենք որ գիտենք փրկել մեր նախահայրերը, մենք մեզ եւ գալիք սերունդները: Մենք ենք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը, մեզմով կը հաստատէ Իր թագաւորութիւնը, աշխարհի ներկայացնելով ուղիղ սկզբունքներ, իրողութեան մէջ մենք ենք աշխարհի փրկիչները» (Ճան Թէլլըր *Յայտնութիւններու Պարբերաթերթ* հատոր 6 էջ 163):

Մարդեր կ'ապրին արեւին եւ լուսինին վրայ:

«Վերջին յիսուն տարիներուն մօտաւորապէս մարդուն բոլոր հնարածները, կերպով մը կը սատարեն փաստելու որ Ճոզէֆ Սմիթը մարգարէ է:

1837-ին գիտեմ որ ըսաւ թէ լուսինը բնակուած է մարդոցմով նման մեր երկիրին, անոնք աւելի երկար կ'ապրին, մօտ հազար տարիներ եւ անոնք աւելի զարգացած են:

Նկարագրած է մարդոց միջին հասակը վեց ոտք եւ հագուած նոյնանման տարագով»:

«Ո՛վ կրնայ պատմել այս փոքր մոլորակին վրայ բնակողներուն մասին որ իրիկունները կը փայլի, որ կը կոչուի լուսին: Նոյն է պարագան արեւին: Կը խորհի ս բնակչութիւն ունին: Կասկած չկայ որ բնակչութիւն ունին: (Պրիկհիամ Եանկ *Հնարքներու Պարբերաթերթ* հատոր 13 էջ 271):

Մեամորթները անիծուած ցեղ մըն են:

«Ոչ միայն Կայենի բաժին եղաւ տառապանքը, այլ նաեւ իր չարութեան համար ան հայրը եղաւ ստորադաս ցեղի մը: Անէծք մը դրուեցաւ իր վրայ եւ այդ անէծքը կը շարունակուի իր շառաւիղներուն վրայ: Միլիոնատոններ եկան այս աշխարհը անիծուած սեւ մորթով, որոնց արգիլուած էր քահանայութիւնը եւ Աւետարանի օրհնութիւնները (Ճոզէֆ Սմիթ *Կատարելութեան Ճամբան*, էջ 102):

Աստուած կին ունի:

«Երկինքի մէջ, ուր մեր հոգիները ծնունդ առած են, շատ աստուածներ կան, անոնցմէ ամէն մէկը ունի կին մը կամ կիներ, տրուած են իրեն...մինչ մահկանացու վիճակի մէջ էր» «Այս վարդապետութիւնը որ երկինքը Մայր մը կայ հաստատուած է եկեղեցական առաջին ժողովին» (Պրոս Սըգոնգի, *Մորմոն Վարդապետութիւն*, էջ 516): ☺

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

1800 Lake Street
Glendale, California 91201
USA

Phone: (818) 507-7400
AEBCCGlendale.org
Email: info@AEBCCGlendale.org

Revised 2024


ԱՂԱՆԴՆԵՐ

☺ Ի՞նչպէս կրնամ ճանչնալ աղանդը:

☺ Ի՞նչ ընելու եմ երբ աղանդաւոր մը գայ եւ դուռս զարնէ:

☺ Եհովայի Վկաներ

☺ Մորմոնականութիւն



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

Ճանչնալ Յիսուս Զրիստոս եւ ճանչնել զԱյն

Ի՞նչպէս կրնամ ճանչնալ աղանդը:

Աղանդը տարբեր է կախարդութենէն կամ ծածուկ պաշտամունքէ որ ուղղուած է Սատանային: Աղանդը կրօնական խումբ մըն է, ունի բաւական ճշմարտութիւն, որով հետեւորդներ կը գրաւէ, բայց բնաւ Աւետարանը ամբողջութեամբ չի սորվեցներ:

Որոշելու համար որ խումբ մը աղանդապաշտ է, կրնաս հարցնել քանի մը հարցումներ:

1. Ո՞վ է Յիսուս իրենց համար: Արդեօք կը սորվեցնեն որ Ան կատարեալ Աստուած է եւ մարդացաւ որպէսզի մարդը մեղքէն փրկէ, կամ թէ կը սորվեցնեն որ Ան բարի մարդ մըն էր, թերեւս մարգարէ մը եւ բոլորս իրեն նմանուելու ենք: Երբ Յիսուս Պետրոսի հարցուց, «*Ո՞վ կ'ըսես որ եմ*»: Պետրոս պատասխանեց «*Դուն ես Քրիստոսը, կենդանի Աստուծոյ Որդին*» (Մատթ. 16:16):
2. Ի՞նչ կ'ըսեն Աստուածաշունչի անսխալականութեան մասին: Աստուածաշունչը միա կ'ճշմարիտ Աստուծոյ խօսքն է, կամ ուրիշ աղբիւրներ ալ ունին: Աստուծոյ խօսքը կենդանի գիրք է, ներշնչուած Աստուծոյ կողմէ: «*Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է եւ օգտակար է սորվեցնելու, յանդիմանելու, ուղղելու եւ արդարութեան առաջնորդելու*» (Բ. Տիմ. 3:16):
3. Ինչպէ՞ս անձ մը կրնայ փրկուիլ: Կա՞յ գործերու կերպ մը, սովորութիւն մը կամ աւանդութիւն, կապուած փրկութեան հետ, ոչ թէ փրկութիւնը հաւատքով կ'ընդունինք Յիսուս Քրիստոսի արեան զօրութեամբ: «*Դուք շնորհքով փրկուեցաք, հաւատքի միջոցով, այս ձեզմէ չէ, այլ Աստուծոյ պարգեւն է, ոչ գործերէն, որպէսզի մարդ չհպարտանայ*» (Եփես. 2:8-9):

Օրինակի համար պահ մը նայինք Եհովայի Վկաներուն: Անոնք կը հաւատան որ Յիսուս բարի մարդ մըն էր, ոչ թէ Աստուծոյ Որդին: Անոնք վերին հեղինակութիւն կը շնորհեն Աստուածաշունչէն գատ ուրիշ աղբիւրներու: Իրենց համար փրկութիւնը բարի գործերով է: Այս հաւատքի ուղղութիւնները

բացայայտօրէն կը յայտնեն որ Եհովայի Վկաները աղանդ են: Բայց կրօն մը պէտք չէ ամբողջացնէ յիշեալ տուեալները որպէսզի դասաւորուի որպէս աղանդ, միայն մէկ յատկանիշ բաւարար է: Շատ մը յարանուանութիւններ կը խաբեն ժողովուրդը պարզապէս ճշմարտութիւնը չսորվեցնելով: Բայց Աստուած Իր խօսքին հանդէպ բացառութիւններ չ'ընէր :

Ի՞նչ ընեմ երբ աղանդաւոր մը գայ եւ դուռս կարնէ:

Եթէ աղանդի անդամներ, Մորմոններ կամ Եհովայի վկաներ քու տունդ գան, իմաստուն պիտի ըլլաս ըսելու, որ դուն չես հետաքրքրուած: Շատ Քրիստոնէաներ կը խորհին թէ աղանդաւորի մը հետ վիճաբանութիւնը արդիւնաւոր կ'ըլլայ, իրենց վկայութեան ճարտարութիւնները կը փորձեն: Այդ սխալ է:

Պէտք է գիտնաս որ անոնք քու տունդ եկան, քեզ փրկելու համար: Չեկան քեզի որպէսզի զիրենք փրկութեան առաջնորդես: Քու յաջողելու հաւանականութիւնդ զերօ է: Եթէ այրող փափաք մը ունիս հաւատքդ բաժնեկցելու, սկսելու ես դրացիներէդ կամ ընտանիքի անդամներէդ:

Ով որ յանձանք կը գործէ ու Քրիստոսի վարդապետութեանը մէջ չկենար, անիկա Աստուած չունի, ան որ Քրիստոսի վարդապետութեանը մէջ կը կենայ, անիկա Հայրն ալ ունի Որդին ալ: Եթէ մէկը ձեզի գայ ու այս վարդապետութիւնը չբերէ, զանիկա տուններնիդ մի՛ ընդունիք, եւ անոր բարեւ մի՛ ըսէք: Քանզի ով որ անոր բարեւ կ'ըսէ, անոր չար գործերուն հաղորդ կ'ըլլայ (2 Յովհ. 9-11):

Եհովայի վկաները Քրիստոնէա՞յ կազմակերպութիւն են:

Եհովայի Վկաները շատ մը հաւատքի ուղղութիւններով կը հակադրուին Աստուածաշունչին հետ: Շատ մը վարդապետութիւններ այնքան սխալ են ու շեղուած, կարելի չէ զիրենք Քրիստոնէական կազմակերպութիւն կամ եկեղեցի ընդունիլ:

Օրինակի համար, Եհովայի Վկաները կը սորվեցնեն թէ իրենց անդամակցութենէն դուրս փրկութիւն չկայ: Մեզ կ'ընդունին որպէս «սխալ կրօն», «պոռնիկ» եւ «Բաբելոն»: Յիշեալները Յայտնութեան մէջ կ'ակնարկեն սխալ մարգարէին եւ եզումէնիկ տիեզերական մէկ կրօնի:

Եհովայի Վկաները կ'ուրանան Քրիստոսի Աստուածութիւնը, Իր մարմնաւոր յարութիւնը եւ Իր տեսանելի վերադարձը: Անոնք կը ներկայացնեն Միքայէլ հրեշտակապետը Հօրը առաջին ստեղծագործութիւնը, որ հոգեւոր էակ էր, ետքը տեսանելի մարմին ունեցաւ որպէսզի իր հետեւորդներէն տեսանելի ըլլայ: Յիսուս կատարեալ մարդ էր, մկրտութեան ատեն Մեսիա եղաւ: Յիսուսի յարութիւնը հոգեւոր էր եւ ոչ թէ մարմնաւոր:

Նոյնպէս կ'ուրանան Սուրբ Հոգիին Աստուածութիւնը, թէ անձ չէ, անտեսանելի անգործունէայ ոյժ մը, որուն աղբիւրը եւ շտեմարանը Եհովա Աստուածն է:

Անոնք կ'ըսեն որ յաւիտեական կեանքը մեր կատարած բարի գործերուն վարձատրութիւնն է: Ասոր համար է որ իրենց անդամներէն կ'ակնկալուի շաբաթական հինգ ժամ յատկացնել դուռէ դուռ երթալ այցելութիւն ընելու եւ իրենց պաշտօնաթերթին բաժանորդագրութիւնը ծախելու:

Մորմոնականութի՞ւնը

Հաւանաբար տեսած ես ծանուցումներ հեռատեսիլի վրայ, որ Մորմոնականութիւնը կը ներկայացնեն որպէս տարբեր «Քրիստոնէական Յարանուանութիւն» մը: Այս հաւատքը հաստատուն չէ Քրիստոնէական հաւատքի չափանիշներուն առջեւ:

Մորմոնականութիւնը պաշտօնապէս հիմնուցաւ 1830-ին Ճոզէֆ Սմիթ-ի կողմէ: Ան ըսաւ որ Աստուած թելադրած է իրեն վերահաստատելու «քահանայութիւնը» եւ թէ ինք ունի երկրի վրայ